

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1982 թվականի վերջին օրն է:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս, տարեմուտի այս գեղեցիկ օրը, Մայրավանքի սեղանատունը կարդարված և հանդիսավոր տեսք է ստացել:

Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, սաները և հրավիրյալները հավաքվել են այստեղ՝ դիմավորելու գալիք՝ 1983 թվականը:

Ավանդություն դարձած այս գեղեցիկ տոնը լի է ուրախությամբ և հուզումնալից պահերով: Պատմություն է դառնում հին տարին և պատմություն դառնալով այն միաժամանակ նախադուռն է հանդիսանում նոր տարվա, նոր սպասումների, նոր աշխատանքների և իրագործումների: Ինչպիսի հաջողություններով, կատարված լավ աշխատանքներով ենք ճանապարհում հին տարին, նույնպիսի բարձր աշխատանքային տրամադրությամբ, սիրով և նվիրումով ենք սկսելու նոր տարին: Ամեն տարվա տարեմուտի ուրախ սեղանների շուրջը հավաքված, մինչև նոր տարվա շնորհավորական բաժակ բարձրացնելը, սովորություն է ամփոփել հին տարվա մեջ կատարված գործերը և ձեռքբերումները, նշել թերությունները և ապա բարի մաղթանքներով ու նոր տարվա շնորհավորական խոսքերով հաջողությունների, խաղաղության տարի ցանկանալ:

Նման խանդավառ մթնոլորտ էր տիրում Մայրավանքի սեղանատանը:

Խմբովին արտասանված Տերունական աղոթքից հետո, լսվում է ճեմարանի քայլերգը: Նոր տարվա երեկոյի բացման և շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը: Իր խոսքի մեջ նա նշում է.

«Մարդկության պատմությունը ավանդել է մի գեղեցիկ սովորույթ, մի ուրախ տոնակատարություն, որը չի սահմանափակվում ո՛չ երկրամասերի սահմաններով և ո՛չ էլ ազգերի տարբերությամբ, այն նվիրական ու հարազատ է բոլորին: Նոր հույսերի և նոր հավատի տոնն է, անփոխարինելի նոր տարվա տոնը:

Որքան հուզիչ է այս պահը, երբ մի կողմից հուզմունքով, քաղցր հիշողություններով և մի տեսակ ներքին տխրությամբ ուղեկցում ենք հին տարին և բերկրանքով, ուրախությամբ ու ցնծությամբ դիմավորում նորը: Մարդկային այս երկու հակադիր զգացումները՝ տխրությունն ու ուրախությունը, միախառնվում և գործում են միաժամանակ: Նոր տարվա շեմին տխրում ենք, որովհետև ամեն մի անցնող տարի անկրկնելի է իր պատմությամբ, ուրախանում ենք, որովհետև պատմության մի նոր էջ է բացվում:

Նոր ծրագրերով և նոր գործերով տրամադրված դիմավորում ենք նոր տարին ու կարծես թե մի պահ կանգ ենք առնում խորհելու, թե ինչ արեցինք անցած տարվա ընթացքում, արդյոք գոհացուցի՞չ էին կատարված աշխատանքները, և այդ աշխատանքների շարունակությունը ինչպիսի՞ արդյունքներ կտա նոր տարվա մեջ: Այս հարցը պետք է հուզի ամեն մի անձի, ով իր ժողովրդի և իր հայրենիքի հարազատ զավակն է և լավատեսորեն է տրամադրված դեպի մարդկության ապագան:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը նոր տարավ շեմին ամփոփեց այս տարվա ընթացքում կատարված աշխատանքները, որոնց հիման վրա էլ պատրաստեց գալիք տարվա ծրագրերը:

Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության անխոնջ ջանքերով այս տարի, հուրախություն տեսչության և ուսանողության, սկսվել և ընթացքի մեջ են ճեմարանի շենքի ընդարձակման

աշխատանքները: Շինարարության ավարտից հետո, ինչպես դասախոսական կազմի, այնպես էլ ուսանողության համար մեծ հնարավորություններ կստեղծվեն ավելի արդյունավետ դարձնելու ուսուցման աշխատանքները:

Այս տարի Ձերդ Սրբության գահակալության 27-րդ տարեդարձի օրերին Մայր Աթոռում Ս. Էջմիածնի միաբանության, պաշտոնեության, ծառայողների, դասախոսական կազմի և ուսանողության համար նշանակալից հանդիսություններ եղան «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» և «Խրիմյան Հայրիկի աղբյուր-հուշարձանի» բացման արարողությունները: Հանդիսություններին մասնակցելու եկած բազմաթիվ հյուրեր այցելեցին հոգևոր ճեմարան՝ ծանոթանալու ճեմարանի ներքին կյանքին:

Հատկապես ցանկանում եմ նշել Ասորվոց Եկեղեցու Պատրիարք Տ. Իգնատիոս Զաքքայի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Ալեք Մանուկյանի այցելությունները հոգևոր ճեմարան: Նրանք վրույց ունեցան ճեմարանի տեսչության ու սաների հետ և մաղթեցին նորանոր հաջողություններ աշխատանքի և ուսման մեջ:

Վեհափառ Տեր, արդեն 27 տարի է, ինչ Դուք Ձեր հայրական հոգատարությամբ շրջապատել եք հոգևոր ճեմարանը: Ձերդ Սրբության առաջարկությունները և խորհուրդները ճեմարանի առաջընթացի համար միշտ եղել և մնում են տեսչության գործունեության ամենակարևոր ուղենիշը: Ձերդ Սրբության նվիրվածությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հայոց հայրենիքին և համայն հայ ժողովրդին լավագույն օրինակն է թե՛ տեսչության և թե՛ ուսանողության համար:

Այս ուրախալի պահին թույլ տվեք, հանուն հոգևոր ճեմարանի տեսչության, շնորհավորել Ձեր Նոր տարին, մաղթել Ձեզ երջանիկ և արգասաբեր բազում տարիներ:

Թող 1983 թվականը խաղաղության, երջանկության և նոր հաջողությունների տարի լինի Հայ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի համար:

Շնորհավոր Նոր տարի»:

Տեսուչ Տեր Եղնիկ քահանայի խոսքից հետո, Ա լսարանի ուսանող Սարգիս Մելքոնյանը արտասանում է հայրենի բանաստեղծուհի Արշալույս Մարգարյանի «Տարեմուտի խոսք» բանաստեղծությունը: Այնուհետև ճեմարանի դասախոս Ղևոնդ քահանա Հարությունյանի ղեկավարությամբ սաները երգում են «Կենաց երգ»-ը:

Մայր Աթոռի միաբանության անունից բարեմաղթանքի հետևյալ խոսքով հանդես է գալիս Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը:

«Ուրախ ենք, որ կրկին Ձերդ Սրբության ներկայությամբ, տարեմուտի այս հանդիսավոր պահին, պատրաստվում ենք ճանապարհել հին՝ 1982 թվականը և դիմավորել նորը՝ 1983 թ.:

Առասպելական Յանուս չաստվածը, որի անունով է սկսվում տարվա առաջին ամիսը, երկու դեմք ուներ: Նրա մեկ երեսը ուղղված էր առաջ՝ դեպի ապագան, դեպի գալիքը, իսկ մյուսը՝ դեպի անցյալը, դեպի պատմությունը: Մերժելով հանդերձ Յանուս չաստծու էությունը՝ մենք այսօր պատմության գիրկն անցնող հին տարվա վերջին պահին դիմում ենք Յանուսի իմաստուն օրինակին: Այսօր, հետադարձ հայացք ձգելով անցնող տարվա 365 օրերի վրա, սիմվոլիկ նժարին ենք դնում այդ օրերից յուրաքանչյուրի արժեքը: Ճիշտ թե սխալ, արդյունավետ թե ապարդյուն, մեր ապրած այդ օրերը անպայման թողնում են իրենց հետքը մեր կյանքում, թողնում են, որպեսզի օգնեն մեզ չկրկնելու թույլ տրված սխալները կամ առավել ամրապնդելու և զորացնելու մեր մեջ այն լավն ու բարին, որ մենք ապրել ենք անցնող տարվա ընթացքում: Ահա թե ինչ է հուշում մեզ Յանուսի երկրորդ երեսը՝ ուղղված ապագային:

Վեհափառ Տեր, սիրելի ներկաներ, եկող յուրաքանչյուր նոր տարի ճշմարիտ և օրգանական շարունակությունն է անցածի: Իսկ անցյալը՝ 1982 թվականը, բազմաթիվ հաճելի պահեր է մեզ պարգևել: Անցնող տարում առավել ևս փայլեց ու ցոլաց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր Հայրապետական Միածնաէջ Մայր Աթոռով և նվիրապետական մյուս Աթոռներով, բազմաթիվ նոր հաջողություններով նշանավորվեց մեր սիրելի Կաթողիկոսի եկեղեցական-ազգային, շինարարական գործունեությունը:

Հայոց Հայրապետի կյանքն ու գործը իմաստության մի ընթերցարան է, որի յուրաքանչյուր էջը լի է հարուստ կենսափորձով, խոր ու պայծառ մտքերով և ուղղամիտ գործելակերպով: Լինել մեր սիրելի Վեհափառի ժամանակակիցը՝ բախտավորություն է, սակայն ծառայել Նրա առաջնորդությամբ գործող Հայոց Եկեղեցում, լինել նույն միաբանության անդամը, վայելել Նրա ամենօրյա հայրական հոգատարությունը՝ երջանկություն է:

Ցանկանք ուրեմն, սիրելի ներկաներ, որ Աստված երկար տարիների առողջ կյանք պարգևի Վեհափառ Հայրապետին, որպեսզի Նա նույն իմաստությամբ և հաստատակամությամբ վարի աստվածային կամքով իրեն վստահված Հայ Եկեղեցու ղեկը: Վեհափառ Տեր, Թող մեր Եկեղեցին և ողջ հայ ժողո-

ՀԱՅ ... ԱԿԱԴԵՄԻԱ

վուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ևս բաղում տարիներ լսեն և վայելեն Ձերդ Սրբության օրհնությունն ու պատգամները: Թող հաստատ ու անսասան մնա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր միաբանությամբ, և թող ծաղկի ու բարգավաճի մեր սիրելի հայրենիքը՝ Մայր Հայաստանը:

Աղոթենք առ Աստված, որ անամպ ու մաքուր երկնակամարը իշխի մեր մոլորակին, որպեսզի ամեն տարի մենք խաղաղ հոգիներով դիմավորենք Ամանորը և Ս. Ծնունդը»:

Ապա բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի «Նոր տարի» քերթվածի արտասանությամբ հանդես է գալիս Բ դասարանի ուսանող Վապգեն Պերպերյանը: Ի դիմաց ճեմարանի սաների շնորհավորական խոսք է ասում Բ լսարանի ուսանող Թորոս Մելենկիչյանը, որը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ ճեմարանի ողջ ուսանողության նկատմամբ ցուցաբերած Իր ջերմ հոգատարության և հայրական վերաբերմունքի համար: «Դուք, որպես մեր ուսուցչապետն ու հայրը,—ասում է նա իր ուղերձում,—ուշադրությամբ և խանդաղատանքով խրատեցիք, սովորեցրիք մեզ ճանաչել ճշմարիտը, բարին ու գեղեցիկը»: Իր խոսքի վերջում նա շնորհակալություն է հայտնում ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և Մայր Աթոռի միաբանությանը:

Այնուհետև ճեմարանի երգչախումբը մեծ ոգևորությամբ կատարում է «Գինու երգը» և «Բաժանման երգ»-ը, իսկ Սմբատ սարկավագ Արիստակեսյանը արտասանում է իր գրած «Նոր տարի» բանաստեղծությունը:

Ավանդույթ դարձած կաղանդչեքերի ընթերցումը կրկնապատկում է բոլորի ուրախությունը:

Երեկոյի վերջում նոր տարվա օրհնության և շնորհավորանքի խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍԻՆ
(31 դեկտեմբերի 1982 թ.)

Նախ Ես պետք է Իմ գոհունակությունը հայտնեմ, որ այս տարի ևս Աստուծո ողորմությամբ այս հարկի տակ միասին ենք: Նաև Իմ շնորհակալությունը այն լավ խոսքերի համար, որոնք ուղղվեցին Իմ անձին՝ բարեմաղթություններով լեցուն: Ես գոհ եմ, որ Նոր տարվա այս հավաքույթին ներկա են Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և Հոգևոր ճեմարանի ամբողջ դասախոսական կազմը:

Հիմա երևի սպասում եք, որ Նոր տարվա առթիվ մի քանի խորհրդածություններ անեմ:

Եկեք մի պահ մեր մտածումը ուղղենք հեռու-հեռուները տիեզերքի՝ հաստատելու համար, թե մի անգամ ևս մեր երկրագունդը արևի շուրջը մի շրջան կատարեց՝ 365 օրերի ընթացքում, որը հավասար է մեկ տարվան: Այս տիեզերական շարժումը տեղի է ունենում չգիտենք երբվանից սկսյալ. համենայն դեպս, միլիոնավոր տարիներից ի վեր: Նույն ճշգրտությամբ, նույն անշեղությամբ, նույն կատարելությամբ, նույն անփոփոխությամբ երկրագունդը իր բոլոր դիրքերը գրավում է իր ճանապարհին՝ 365 օրերի ընթացքում: Եվ ոչ միայն մեր երկրագունդը, այլև մյուս բոլոր մոլորակները արևի շուրջը նույն շրջանն են անում, ոմանք ավելի մոտիկից, ոմանք ավելի հեռվից:

Նույնպիսի շարժումների ընթացքի մեջ են մյուս արևները և մյուս մոլորակները, կատարյալ ներդաշնակության մեջ: Ոչ մեկ արև, ոչ մեկ մոլորակ, միլիոնավոր երկնային մարմինների մեջ, երբեք չի սխալվում, երբեք չի շեղվում իր ճանապարհից: Բոլորը կատարում են իրենց պարտականությունը կատարյալ ճշգրտությամբ, կարող ենք ավելացնել՝ բարեխղճությամբ:

Ահավասիկ մի պատկեր, որ մեզ շատ բան է թելադրում մեր կյանքի վերաբերյալ: Ինչ կլիներ, եթե այս աշխարհի վրա ապրող մարդիկ էլ, նրանցից ամեն մեկը իր չափը, իր տեղը, իր անելիքը իմանար և իր պարտականությունը կատարեր բարեխղճությամբ, կանոնավոր, անշեղ կերպով: Ես կարծում եմ, որ այդ դեպքում Հիսուսի երազած դրախտը կիջներ աշխարհի վրա:

Այս մտորումներով մոտենալով մեր միաբանական, մեր եկեղեցական կյանքին, ուզում եմ թելադրել հատկապես մեր երիտասարդներին, մեր ուսանողներին, որպեսզի բոլորը գիտակցեն, թե իրենց կյանքի ճանապարհին մի կոչում ունեն, իզուր տեղը չեն ծնվել և իզուր տեղը չեն ապրում, այլ մի պարտականություն ունեն կատարելու անշեղ կերպով, ճշգրտությամբ, բարեխղճությամբ, ինչպես երկնային մարմինները, որոնք այսպիսով ապահովում են ամբողջ տիեզերքի ներդաշնակությունը և խաղաղությունը:

Դուք՝ ուսանողներդ, բոլորդ էլ լավ տղաներ եք: Ես վստահությունն ունեմ, որ այստեղ գալով, հոգևոր ճեմարանում սովորելով՝ մի վեհ նպատակի պիտի ծառայեք այս կյանքի մեջ:

Մարդկային բարոյական մեծագույն արժանիք է ծառայել մի գաղափարի, մի նպա-

տակի, մի սուրբ հաստատության, ինչպիսին մեր Եկեղեցին է, մի սրբական հաստատություն, որ ժառանգել ենք պատմականորեն, դարերի խորքից: Մեկանից յուրաքանչյուրի համար, Ինձանից սկսած, երջանկություն է և պատիվ և փառք, որ ամեն մեկս մեր լուման մուծենք, մեր աշխատանքի բաժինը բերենք, որպեսզի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ փառքի բարձունքի վրա մնա ի մխիթարություն մեր ժողովրդի և հուրախություն ողջ քրիստոնեության, որովհետև մեր Եկեղեցին քրիստոնեական Եկեղեցիների մեջ ամենավաղերական Եկեղեցիներից մեկն է:

Մաղթում եմ, սիրելի երիտասարդներ, որ դուք հստակ գիտակցությամբ մոտենաք ձեր կյանքին, ձեր աշխատանքին, ձեր ներկային ու ապագային և ձեզ համար սրբական նպատակ դարձնեք ծառայել Հայոց Սուրբ Եկեղեցուն և փառավորել այն: Այս ճանապարհով է, որ մենք կգացումը կունենանք մեր Եկեղեցու և Մայր Աթոռի հավիտենականությանը մասնակցելու մեր կյանքով ու մեր գործով: Վստահ եմ, որ հետագա տարիներին ձեզանից շատերը պիտի ըմբռնեն այս բարոյական ճշմարտությունները և պիտի կարողանան մեր միաբանության շարքերի մեջ իրենց պարտականությունը կատարել արժանավայել կերպով:

Մաղթում եմ ձեզ բոլորիդ հոգվո և մարմնո քաջառողջություն, ուժ, եռանդ և լավատեսության ոգի:

Հավատք ունեցեք ձեր անձերի վրա, ձեր ուժերի վրա, որովհետև այդ հավատքը ձեզ ավելի պիտի զորացնի, ավելի պիտի պայծառակերպի:

Թող 1983 տարին լինի խաղաղության տարի, շինարարության տարի, ժողովուրդների բարեկամության տարի, որպեսզի մենք էլ կարողանանք մեր ուժերով մեր պարտքը կատարել Աստուծո առջև, մեր ազգի առջև:

Բարի գալուստ մաղթենք 1983-ին, հավատանք գալիքին, հանձնվենք նրա բախտին ու դեպի առաջ ընթանանք Սուրբ Հոգով լուսավորված:

Շնորհավոր Նոր տարի:

Ամանորի ուրախ երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Կեսգիշերին Մայրավանքի զանգերի խորհրդավոր զողանջները ազդարարեցին հին տարվա ավարտը և նոր տարվա սկիզբը:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԿՐՏՉՅԱՆ